

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Թիվ 3(160)
Մարտ,
2013թ.

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ-ԵՋԵՄԵՏՅԱԿԻԱՅ ԴԱՅԵՏԱ «АРЦАХИ АМАЛՏԱՐԱՆ»

ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՄՐԱՊՆԴԻ ԱՐՑԱԽԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Եռակողմ համաձայնագիրը կյանքի կոչվեց

«Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն և «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն ԼՂՀ-ում կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի կրթության խթանման նպատակով համագործակցություն են սկսում Արցախի պետական համալսարանի հետ: Մարտի 29-ին Արցախի մայր բուհի խորհրդակցությունների նոր դահլիճում Կոնի ունեցավ վերոնշյալ ընկերությունների և ԱրՊՀ-ի միջև համագործակցության եռու-

տանից, այնպես էլ աշխարհի զարգացած երկրներից»,- ասաց Ս. Ասրյանը:

Եկավ համաձայնագրի վավերացման հանդիսավոր պահը: Փաստաթուղթը ստորագրեցին՝ «Մինոփսիս Արմենիայի» կողմից՝ ընկերության տնօրեն Հովիկ Մուսայեյանը, «Ղարաբաղ Տելեկոմ» կողմից՝ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը և Արցախի պետական համալսարանի կողմից՝ ռեկտոր Ստեփան Գաղաթյանը: Կողմերի համաձայ-

մար չկա այլ ճանապարհ, քան ապավինել ինտելեկտին և գիտատար տնտեսությանը: Անկախ այն բանից, թե ինչ աշխարհաբարձական իրողությունների մեջ է երկիրը, ինչ դժվարություններ ու մարտահրավերներ կան ծանրացած նրա առջև, տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է զարգանան: Իսկ ցանկացած ճյուղ կարող է զարգանալ միայն բավարար ինտելեկտուալ ներուժ և տվյալ երկրի իշխանությունների կողմից բաղաբաշխված ռեսուրսներով, այսինքն՝ պետք է լինի պետական հոգածություն և հովանավորություն»,- ասաց Հ. Մուսայեյանը: Այս առումով նա շնորհակալություն հայտնեց Արցախի Հանրապետության Նախագահին՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից հատկացված 28 միլիոն դրամի աջակցության շնորհիվ համաձայնագրի շրջանակներում արդի և ուսումնական պահանջներին ու չափանիշներին համապատասխան կկահավորվի և ժամանակակից համակարգչային տեխնիկայով կվերագինվի համալսարանի կողմից տրամադրված համապատասխան լսարանային տարածքը, կփոխհատուցվի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը և հավասարեցված այլ վճարներ:

«ՂՏ» ՓԲԸ գլխավոր տնօրենը շնորհավորանքի խոսքում հավաստիացրեց, որ միայն այս ծրագրով չպիտի բավարարվեն: Մենք պետք է մտածենք կրթության բնագավառում իրականացնելիք այլ ծրագրերի մասին, որոնք կնպաստեն ոլորտի զարգացմանը, ասաց Ռ. Յիրիկյանը: Նրա խոսքերով՝ որպես ընկերություն, «Ղարաբաղ Տելեկոմը» միշտ հասկացել ու կիսել է իշխանությունների մտահոգությունը, եղել միշտ պատրաստակամ՝ ձեռք ձեռքի տալով լուծելու բազմաթիվ

Արցախի մայր բուհի ռեկտորը կարևորեց համատեղ ծրագրի իրականացումը, մասնավորապես՝ «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» մասնագիտացմամբ բակալավրական և մագիստրոսական կրթություն տրամադրող ամբիոնի ստեղծումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Նա շնորհակալություն հայտնեց «Մինոփսիս Արմենիա» և «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերություններին՝ նշելով, որ համալսարանը պատվով կկատարի իր վրա դրված պարտականությունները: Այս առումով ռեկտորն իրազեկեց, որ Ստեփանակերտից երեք հոգի արդեն Երևանում վերապատրաստման դասընթացներ են անցնում՝ նոր ուսումնական տարվանից ԱրՊՀ-ում դասախոսական աշխատանք վարելու նպատակով: Բուհի մի շարք դասախոսներ՝ «Կիրառական մաթեմատիկա», «Ընդհանուր և կիրառական ֆիզիկա» ամբիոններից, նույնպես հնարավորություն կունենան դասավանդելու: Ներկա պահին հասակեցվում է 15 հոգուց բաղկացած խմբի ցուցակը՝ նոր մասնագիտության ձեռքբերման համար: Համալսարանը հատկացրել է լսարան՝ 42 բառ. մետր տարածքով, որը սպասում է շինարար-վարպետներին, ասաց Ստեփան Գաղաթյանը:

Նշանակալից իրադարձության առիթով կողմերին և մյուս ներկայացրեց շնորհավորեց Նախագահ Բակո Սահակյանը: Երկրի ղեկավարը կարևորեց տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հանրապետության բոլոր բնագավառներում: «Մենք քննադատել ենք մի շրջան, որտեղ հնարավոր չէ ապահովել երկրի ինքնաբավ և երկարաժամկետ զարգացումը՝ առանց ՏՀՏ ոլորտի»,- ասաց Բակո Սահակյանը: Նախագահը շնորհակալություն



Կողմ համաձայնագրի վավերացման պաշտոնական միջոցառումը, որին մասնակցում էր Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը:

Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, կառավարության անդամներ, համաձայնագրի կողմերի և ՏՏ ոլորտի ներկայացուցիչներ, լրագրողներ: Այն վարում էր ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Ոչունելով մեծ համաձայնագրի ստորագրումը՝ ԼՂՀ ԿԳ նախարարը նշեց, որ այն բացառիկ նշանակություն կունենա՝ միկրոէլեկտրոնիկայի բնագավառում բարձրորակ կարգերի պատրաստման գործընթացում: Համաձայնագրի արդյունքում, ինչպես ասաց Սլավա Ասրյանը, սկիզբ կդրվի մի մեծ նախաձեռնության, որը բխում է ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագրի՝ երկրի տնտեսության զարգացման հիմնադրույթներից:

Նախարարը շնորհակալություն հայտնեց «ՂՏ» գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին՝ նշելով, որ մեծ է ընկերության ներդրումը մեր հանրապետության տարբեր ոլորտներում, հատկապես՝ կրթության: Նրա հավաստմամբ՝ համաձայնագրի ընդունումը մեծ պատասխանատվություն է դնում կրթության ոլորտի պատասխանատուների և առաջին հերթին Արցախի պետական համալսարանի վրա, քանզի մայր բուհը կոչված կլինի հետագա քայլեր իրականացնել, իսկ ամենակարևորը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով որակյալ մասնագետներ պատրաստել: «Մա կարելի է համարել սկիզբ. հետագայում մեծ ծրագրերը շարունակական բնույթ կկրեն: Արցախը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում չպետք է հետ մնա ինչպես Հայաս-

նեցրած չափորոշիչների համաձայն՝ ԱրՊՀ-ն կստեղծի համահամալսարանական ամբիոն, որտեղ կիրականացվի ամենօրյա կրթական գործունեություն և համապատասխան ֆակուլտետի բակալավրիատի երկրորդ կուրսն ավարտած ուսանողներից ուսանողական համակազմի ընտրություն: Ամբիոնում բակալավրական կրթական ծրագիրն ավարտած լավագույն ուսանողները հնարավորություն կունենան ուսումնառությունը շարունակել մագիստրատուրայում:

Իր ելույթում «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ տնօրենը ներկայացրեց ծրագրի իրականացման կապակցությամբ ընկերության կողմից նախատեսվող աշխատանքները:

«Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն համալսարանին անվճար կտրամադրի համապատասխան մասնագիտացմամբ որակյալ մասնագետներ պատրաստելու համար անհրաժեշտ Մինոփսիս ընկերության ծրագրային գործիքների փաթեթների 60 լիցենզիա և համապարփակ ուսումնական նյութեր, որոնք կընդգրկեն բոլոր դասավանդվող դասընթացների ամբողջական մեթոդական ապահովվածությունը, դասախոսությունների ներկայացումները, լաբորատոր, գործնական աշխատանքների և կուրսային նախագծերի մեթոդական ապահովվածությունը, տնային աշխատանքները և քննական հարցառումները, ինչպես նաև առնվազն կես տարին մեկ անգամ կվերապատրաստի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Հ. Մուսայեյանի հավաստմամբ՝ «Մինոփսիսը»՝ որպես հաշվարկային առաջատար ընկերություն, համագործակցում է աշխարհի ավելի քան 1300 համալսարանների հետ: Հայաստանում այդ համալսարանները չորսն են՝ ՀԳՏՀ, ԵՊՀ, ՀՈՀ և Եվրոպական տարածաշրջանային ակադեմիան: «Արցախի հա-



մար բազմատեսակ խնդիրները: «Հիմնադրման օրվանից «Ղարաբաղ Տելեկոմը» խրախուսել է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք նոր հնարավորությունների և նվաճումների ուղի կարող են հարթել Արցախի երիտասարդ սերնդի առջև: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտը Արցախի տնտեսական զարգացման գերակա ուղղություններից է, և մենք պետք է հնարավոր բոլոր միջոցներով աջակցենք այդ ոլորտի աշխուժացմանը»,- ասաց Ռ. Յիրիկյանը:

հայտնեց «Մինոփսիս Արմենիա» և «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերությունների ղեկավարներին՝ կարճ ժամկետում Արցախի իշխանությունների խնդրանքին արձագանքելու համար՝ նշելով, որ համաձայնագիրը հիմք կհանդիսանա երկրի հասարակական կյանքի ճիշտ կառուցման և համաշխարհային տնտեսությանն արագ ինտեգրվելու համար:

Վերջում Համաձայնագրի կողմերի ղեկավարները պատասխանեցին լրագրողների հարցերին:

